

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՒՅԵԼԵԱՆԻ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻԻ 1-

Ամերիկայի Հայոց Առաջնորդական Վիճակի
Գեր. եւ Արժ. Հովիւներուն, պատ. Հոգաբարձութեանց եւ
Յորելինական Յանձնախումբերուն,

Տարւոյս Մայիս 23 եւ Թիւ 32 շրջաբերականով՝ Առաջնորդ Սրբազան
Հայրը կը տեղեկացնէր թէ՝ Ազգ. Կեդր. Վարչութեան որոշմամբ, այս տարի
պատշաճ հանդիսութեամբ պիտի տօնուի Առաջնորդարանի իբրեւ ուրոյն թեմ
հաստատութեան Յիսնամեայ Յորելեանը ամբողջ թեմին մէջ:

Կը յայտնուէր նաեւ թէ՝ այս հանդիսութեանց գլխաւոր նպատակը պիտի
ըլլայ Առաջնորդարանի յիսուն տարուան կեանքն ու յառաջդիմութիւնը պատկե-
րացնել ժողովուրդին առջեւ եւ հայութեան հաւատքը զօրացնել Ամերիկայի
մէջ իր մնայուն գոյութեան եւ ապագային մասին, շեշտելով դերն ու կարե-
ւորութիւնը Հայց. Եկեղեցիին, միաժամանակ վեր հանելով յիսուն տարիներու
ընթացքին եկեղեցւոյ մէջ գործող անձանց եւ կազմակերպութեանց արժանիքները:

Հանդիսութեանց երկրորդական նպատակը պիտի ըլլայ՝ հիմնադրամ մը գո-
յացնել որպէս զի Ամերիկայի մէջ հոգեւորականաց պատրաստութեան եւ կրթու-
թեան համար ձեռնարկ կատարուի եւ յատկապէս հոգեւոր ճեմարանի մը հիմը
դրուի:

Դարձեալ՝ որ այս հանդիսութիւնները կազմակերպելու համար, կազմուած
է Յորելինական Կեդր. Յանձնաժողով մը պատրաստելու ընդհանուր ծրագիրը եւ
համայնքներուն տալու հարկ եղած դիւրութիւնները:

Յորելինական Կեդր. Յանձնաժողովս իր քանիցս գումարած նիստերուն
մէջ որոշ աշխատանք կատարած ըլլալով՝ որոշեց ներկայիս Ձեր ուշադրութեանց
յանձնել հետեւեալ կէտերը.-

1- Տօնակատարութեան անունը պիտի ըլլայ՝ ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՒՅԵԼԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ: FIFTIETH ANNIVERSARY OF THE
AMERICAN DIOCESE OF THE ARMENIAN CHURCH.

2- Տօնակատարութեան հանդիսութեանց յատկացուած են յառաջիկայ Հոկտեմբեր
եւ Նոյեմբեր ամիսները: Կը նշանակէ որ ամէն համայնք միայն այդ երկու
ամիսներէն յարմար Կիրակի մը պէտք է ընտրէ եւ այդ օրը կատարէ տօնակա-
տարութիւնս:

3- Տօնակատարութիւնները ժողովրդական էայն խաւերուն մատչելի դարձնելու
համար՝ կը յանձնարարուի հրապարակային ժողովներ սարքելը, թէեւ մեծ
գաղութներուն մէջ՝ ուր որ հնարաւորութիւն կայ, կարելի է սարքել նաեւ
ճաշկերոյթ:

Իւրաքանչիւր համայնքի Յանձնախումբի դատողութեան կը թողուի, ըստ
յարմարութեան, տօնակատարութիւնը կատարելու հրապարակային ժողովով կամ
ճաշկերոյթով, եւ կամ երկուքը մէկ:

4- Հանդէսներուն մէջ ցուցադրուելու են՝ Հայաստանի տեսարաններու
գունաւոր Ֆիլմերը, որ Կեդր. Յանձնաժողովը պիտի հայթայթէ, որուն նաեւ
միացուած պիտի ըլլան մեր թեմի եկեղեցիներու տեսարանները:

Այսու կը հրահանգուի որ Յոթելիական Յանձնախումբերը կամ պատահաբար ճակատագրով անմիջապէս կարգադրուի ընեն՝ իրենց եկեղեցիներուն ներքին եւ արտաքին տեսարաններու Ֆիլմերը առնել տալու, 50 ոտք, 16 Միլիմետր, գունաւոր, եւ դրկեն Առաջնորդարան մինչեւ Սեղտեմբեր 1, որպէսզի կարգի դրուին եւ միացուին միւս ժապաւէնին:

5- Կը յանձնարարուի՝ տօնակատարութեանց, ժողով կամ ճաշկերոյթ, նկարները առնել, յետագային հրատարակուելիք Յուշագրքին մէջ գործածուելու համար:

6- Կը յանձնարարուի որ՝ իւրաքանչիւր համայնք ատենախօսներ՝ Հայերէն եւ Անգլերէն, ինչպէս նաեւ Արուստագէտներ ճարէ տեղւոյն վրայ: Դժուարութեանց պարագային դիմել Կեդր. Յանձնաժողովին որպէսզի անհրաժեշտ կարգադրուի թիւնը ընէ:

7- Տօնակատարութեան գեղարուեստական քաժինները ըլլալու են նպատակին պատշաճ եւ վայելուչ, եւ որպէսզի այդ գործը դիւրանայ, Կեդր. Յանձնաժողովս պատրաստութեան մէջ է արտաստուութեանց եւ երգերու յատուկ գրքոյկ մը որմէ կ'ուղարկուի Ձեզի երբ պատրաստ ըլլայ:

8- Կեդր. Յանձնաժողովս կը պատրաստէ մասնաւոր զարդակոճակներ, հանդէսներու ատեն օգտագործելու եւ ընթացիկ ծախքերը ապահովելու համար: Իւրաքանչիւր Յանձնախումբ՝ վաղօրօք տեղեկացնելու է թէ՛ որքան զարդակոճակներու պէտք պիտի ունենայ:

9- Այս տարի Առաջնորդարանը ձեռնարկած է Տարեգրքի մը պատրաստութեան որ կը բովանդակէ Առաջնորդարանի եւ համայնքներու պատմութիւնը, մաքուր տպագրութեամբ եւ նկարազարդ հատոր մը: Այս գիրքը պէտք է օգտագործուի Առաջնորդարանի եւ եկեղեցիներու պատմութեանն ընդհանուր խնամքի համար: Նաեւ պատշաճ պիտի ըլլայ զայն սպառել տօնակատարութեանց ընթացքին: Գրքի արժէքը կը ծանուցուի երբ պատրաստ ըլլայ եւ դրկուի:

Նկատի ունենալով տօնակատարութեան կարեւորութիւնը՝ Կեդր. Յանձնաժողովս կազմած է նաեւ Յայտարարութեանց /Փրակիսիթի/ Յանձնախումբ մը, որ թերթերու մէջ գրութիւններով եւ յօդուածներով պիտի ջանայ կարելի եղածին չափ տարածել Յոթելեանի գաղափարը եւ մատնանշել գործնական օգուտները:

Պիտի խնդրենք որ համայնքներուն մէջ եւս եթէ կան ձեռնահաս գրողներ՝ Յանձնախումբերուն միջոցաւ մեզի դրկեն Յոթելեանի առթիւ պատշաճ գրութիւններ, կամ ուղղակի իրենք ջանան մամուլին մէջ հրատարակել զանոնք: Յանձնախումբերու կողմէ գործին յաջողութեան համար կարծիքներ եւս սիրով ուշադրութեան կ'առնուին:

Կեդրոնական Յանձնաժողովս վստահ է թէ ամէն համայնք լաւ կերպով ծրագրուած գործունէութեամբ պիտի կատարէ Յոթելիական տօնակատարութիւնը եւ ձեռք բերէ առաւելագոյն բարոյական եւ նիւթական արդիւնք:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով՝
Մնամք՝ ի դիմաց

Առաջնորդարանի Հաստատման Յիսնամեայ Յոթելեանի
Կեդր. Յանձնաժողովի

Ատենադպիր՝ ՆՇԱՆ ԱԻԱԳԵԱՆ Ատենապետ՝ ՆՇԱՆ ՇԱՀԻՆԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԱՄԵՐԻԿԱՅԻ



DIocese OF THE ARMENIAN
CHURCH IN NORTH AMERICA

336 WEST 20th STREET
New York 11, N. Y.

Telephone: CHelsea 3-1791

Office Copy

Այս տարի լրացաւ Յիսուս տարուան շրջանը այն օրէն՝ երբ առաջին անգամ Ամերիկայի մէջ Հայոց Եկեղեցին հաստատուեցաւ իբրեւ Առաջնորդական Թեմ, Հայոց Հայրիկ Տ.Մկրտիչ Կաթողիկոսի կոնդակով:

Առաջնորդարանիս Կեդր. Հարչութեան մէջ որոշած ենք որ այս Յիսուսեան տարեդարձը պատշաճ շուքով եւ Հանդիսութեամբ տօնուի մեր բովանդակ թեմին մէջ, իւրաքանչիւր համ յնքի կողմէ:

Հանդիսաւորութեանց գլխաւոր նպատակը պիտի ըլլայ՝ Առաջնորդարանի յիսուս տարուան կեանքն ու յառաջդիմութիւնը պատկերացնել ժողովուրդին ~~պիտի~~ եւ Հայութեան հաւատքը զօրացնել Ամերիկայի մէջ իր մնայուն գոյութեան եւ ապագային մասին, շեշտելով դերն ու կարեւորութիւնը Հայաստանեայց Եկեղեցիին, միաժամանակ վեր հանելով յիսուս տարիներու ընթացքին եկեղեցւոյ մէջ գործող անձանց եւ կազմակերպութեանց արժանիքները:

Հանդիսութեանց երկրորդական նպատակը պիտի ըլլայ՝ հիմնադրամ մը գոյացնել որպէսզի Ամերիկայի մէջ հոգեւորականաց պատրաստութեան եւ կրթութեան համար ձեռնարկ կատարուի եւ յատկապէս հոգեւոր ճեմարանի մը հիմը դրուի:

Այս Յոբելիական Հանդիսութիւնները կազմակերպելու համար՝ կազմած ենք 17 անձերէ բաղկացեալ գործօն Կեդրոնական Յանձնաժողով մը որ արդէն գործի ձեռնարկած է եւ կը կատարէ կազմակերպելու աշխատանքները:

Մեր ցանկութիւնն է՝ որ Յոբելիական Յանձնաժողովը բացի իր գործօն անդամներէն, ունենայ նաեւ Պատուակալ անդամներ, որոնք բարի ըլլան ձեռնարկը քաջալերելու եւ ահապարակ իրենց համակիր վերաբերմունքով՝ անոր յաջողութեան զօրավիգ կանգնին:

Ըստ այսմ Ձեր ազնուութիւնը ընտրուած ըլլալով իբրեւ Պատուակալ անդամ այս Յանձնաժողովին, կը սիրենք յուսալ որ սիրով յօժարութիւն պիտի յայտնէք որ Ձեր անունը դնենք իբրեւ այդ, որուն համար կը կանխենք յայտնել մեր գոհունակութիւնը:

Ողջունիւ սիրոյ եւ օրհնութեամբ
Մնամք աղօթարար

Արամ Կոչարյան

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Մայիս 23, 1949

ՅԻՄՆԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ



FIFTIETH ANNIVERSARY
OF THE AMERICAN DIOCESE OF THE
ARMENIAN CHURCH

1898

1948

630 Second Avenue, New York 16, N. Y. Tel. LExington 2-5790

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ.— Տ. ՏԻՐԱՆ Ս. ԵՊԻՍԿՈՊՈՍ՝ Նախագահ, Ն. ՇԱՀԻՆԵԱՆ՝ Առեմապետ, ՏԿ. Ա. ՆԻԿՈԼԵԱՆ՝ Փոխ-Առեմապետ, Ն. ԱՒԱԳԵԱՆ՝ Առեմապետի Է. ՍՄԱՐԵԱՆ՝ Գանձապահ, Տ. ՎՐԹԱՆԷՍ Ա. ԲՀՆՅ. ՓԱՓԱԶԵԱՆ, Տ. ԽՈՐԷՆ ԲՀՆՅ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, Տ. ԱՐՏԷՆ ԲՀՆՅ. ԱՇՅԱՆ, ՏԿ. Ա. ԱՒԱԳԵԱՆ, ՏԿ. Հ. ԴԱԽԻԹԵԱՆ, ՏԿ. Ա. ՍԻՆԱՆԵԱՆ, Ս. ԲՐՈՒՏԵԱՆ, Ե. ԳՈՒՅՈՒՄՅԱՆ, Ե. ԹԱԴՈՍԵԱՆ, Գ. ԵԱՐՈՒԹԻՆԵԱՆ, Մ. ՆԱԳԱՇԵԱՆ, Գ. ԶԱԳՄԱԳԼԵԱՆ, Ե. ՊԱՊԱԿԵԱՆ:

ՊԱՏՈՒԱԿԱԼ ԱՆԴԱՄՆԵՐ

- Տ. ՏԻՐԱՆՍՐ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
- Ա. ԱԹԹԱՐԵԱՆ
- Ա. ԱԼԵԿՍԱՆԵԱՆ
- Ղ. ԱՂԱՅԱՆԵԱՆ
- Ս. ԱՂԱՅԱՆԵԱՆ
- Ե. ԱՆՏՈՆԵԱՆ
- Ն. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ
- Ա. ԱՐԱՊԵԱՆ
- Մ. ԱՒԱԳԵԱՆ
- Ս. ԱԻԵՏԻՍԵԱՆ
- ԲԺ. Ս. ԲԱՐՆՁԱՆԵԱՆ
- ՏԿ. Զ. ԳԱԼԷՄԲԵՐԵԱՆ
- Ա. ԳՐԱՅԵԱՆ
- Ո. ԵՐԱՄԵԱՆ
- Գ. ԵԿԱԻԵԱՆ
- Օ. ԹԱՊԻՊԵԱՆ
- Մ. Ե. ԹԻՐԵԱՔԵԱՆ
- Ե. ԹՈՒՂՈՒԳԵԱՆ
- Ե. ԹՈՒՄԱՅԵԱՆ
- ՏԿ. Ա. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ
- Ն. ԹՈՒՓԱՆՅԱՆ
- Մ. ԽՈԼԼԻԿԵԱՆ
- ԲԺ. Ե. ԿՈՎԻԿԵԱՆ
- Լ. ԿԵՐՏԱՆ
- ՏԿ. Մ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ
- ԵԿ. Ե. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ
- Ն. ՀԻՆԴԻԵԱՆ
- Պ. ՂԱԶԱՐԵԱՆ
- Զ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ
- Տ. ՂԱՐԻՊԵԱՆ
- Ե. ՃԵԼԱԼ
- Ա. ՃԵՐԱՅԵԱՆ
- Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ
- ԵԿ. ՄԱՐՏԻԿԵԱՆ
- Յ. ՄԻՍԻՐԻԵԱՆ
- ԵԿ. Ե. ՄՈՒՐԱՏԵԱՆ
- Ե. ՄՈՎՍԷՍԵԱՆ
- Ե. ՅԱԿՈՒԵԱՆ
- Ա. Ն. ՆԱԶԱՐ
- Վ. ՆԱԼՊԱՏԵԱՆ
- Ե. ՆԱՀԻԿԵԱՆ
- Մ. ՆԱՅԱՐԵԱՆ
- Ե. ՆՈՐԵԱՆ
- Օ. ՆՈՐՀԱՏ
- Խ. ՇԱՀՊԱԶԵԱՆ
- Հ. ՉՈՐՊԱՅԵԱՆ
- Ճ. ՉՈՐՊԱՅԵԱՆ
- ՏԿ. Շ. ՊԱԼԵՅՅԱՆ
- Գ. ՊԱՆԱՏՈՒՐԵԱՆ
- Զ. ՊԱՅԲԱՐ
- Լ. ՊԱՊԱՅԵԱՆ
- Պ. ՊԱՊԻԿԵԱՆ
- Օ. ՊԵՏՐՈՍԵԱՆ
- ԲԺ. Ե. ՊՈՒՔՐԱՅԵԱՆ
- ԲԺ. Ե. Գ. ՊԵՇԼԵԱՆ
- Հ. ՊՈՂՈՍԵԱՆ
- Տ. Ե. ՊՅՈՒՅԵԱՆ
- Մ. ՍԱՀԱԹՅԱՆ
- Գ. ՍԵՄԷՐՅԱՆ
- Վ. ՍԻՄԻՏԵԱՆ
- Ե. ՍՈՒՆ
- Վ. ՎԱՐԳԱՆ
- Ն. ՎԱՐԴԱՆԵԱՆ
- Տ. ՏԱՏՈՒՐԵԱՆ
- Ե. ՏԵՐՏԵՐԵԱՆ
- Ա. ՏԵՐՈՒՆԵԱՆ
- Ը. ՏԵՐՎԻՇԵԱՆ
- Կ. ՏԻԼՄԻՋԵԱՆ
- Ա. ՏՕՆԵԱՆ
- Գ. ՓԱՓԱԶԵԱՆ
- Տ. ԽԱՆ ԲԵԼԵԿԵԱՆ
- Ճ. ՔԵԼԵՇԵԱՆ
- Ա. ՔԵՇԻՇԵԱՆ
- ԲԺ. Ս. Ե. ՔԵՇ
- Մ. ՔԻՒՐՔԱՅԵԱՆ
- Վ. ՔԵՇԻՇԵԱՆ

Օգոստոս 1, 1949

Այս տարի լրացաւ յիսուսն տարուան շրջանը այն օրէն՝ երբ առաջին անգամ Ամերիկայի մէջ Հայոց Եկեղեցին Հաստատուեցաւ իբրեւ Առաջնորդական Թեմ, Հայոց Հայրիկ Տ. Մկրտիչ Կաթողիկոսի Կոնդակով:

Առաջնորդարանը որոշած է որ այս յիսնամեայ տարեդարձը պատշաճ շուքով եւ Հանդիսութեամբ տօնուի մեր բովանդակ թեմին մէջ, յարաշիկայ Հոկտեմբեր եւ Նոյեմբեր ամիսներու ընթացքին:

Հանդիսութեանց գլխաւոր նպատակը պիտի ըլլայ՝ Առաջնորդարանի յիսուսն տարուան կեանքն ու յառաջդիմութիւնը պատկերացնել ժողովուրդին եւ Հայութեան Հաւատքը զօրացնել՝ Ամերիկայի մէջ իր մնայուն գոյութեան եւ ապագային մասին՝ շեշտելով դերն ու կարեւորութիւնը Հայաստանեայց Եկեղեցիին, միաժամանակ վերահանել յիսուսն տարիներու ընթացքին եկեղեցւոյ մէջ գործող անձանց եւ կազմակերպութեանց արժանիքները:

Հանդիսութեանց երկրորդական նպատակը պիտի ըլլայ՝ Հիմնադրամ մը գոյացնել որպէսզի Ամերիկայի մէջ Հոգեւորականաց պատրաստութեան եւ կրթութեան համար ձեռնարկ կատարուի եւ յատկապէս Հոգեւոր ճեմարանի մը հիմը դրուի:

Այս տօնակատարութեան առթիւ տեղի ունենալիք Հանդիսութիւնները անշուշտ պիտի ունենան իրենց գեղարուեստական բաժինները, եւ նկատի ունենալով անոր Եկեղեցական-Ազգային բնոյթն ու հանգամանքը, Յանձնաժողովս կը սիրէ յուսալ թէ՛ մեր բոլոր Հայ արուեստագէտները բարի պիտի գտնուին իրենց տաղանդն ու աստուածատուը շնորհը սիրայոժար կերպով տրամադրել, երբ իրենց դիմում կատարուի:

Յանձնաժողովս Հաւատացած է թէ՛ Դուք եւս, որպէս սիրուած եւ ծանօթ արուեստագէտ մը, Ձեր մասնագիտական ծառայութիւնը չպիտի զլանաք, երբ Ձեզի դիմուի: Հասկանալի է որ՝ երբ ճամբորդել հարկ ըլլայ, Յանձնաժողովը կը հոգայ ճանապարհածախսը եւ յարակից ծախսերը:

Եւ որպէսզի օրուան արտասանութիւններն ու երգերը ըլլան նպատակայարմար ու աւուր պատշաճի, Յանձնաժողովս պիտի հրատարակէ ընտրուած երգերու եւ արտասանութեանց գրքոյկ մը, որմէ օրինակ մը Ձեզի կը դրկենք երբ լոյս տեսնէ, եւ որ անկէ կատարելու է ընտրութիւն:

Կանխայայտ շնորհակալութիւններով ի դիմաց Կեդր. Յանձնաժողովի Առեմապետի՝ Ն. ԱՒԱԳԵԱՆ